

ՌՈՒՍԵՐԵՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՂԱԴԻԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ*

ՇՈՂԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, ռուսերեն, բառապաշար, փոխառություն, դարձված, իմաստափոխություն, արմատ, ածանց:

Ամփոփում

Ղարաբաղի բարբառի փոխառյալ բառերը ռուսերենում ունեցած իրենց իմաստների համեմատությամբ կարող են պահպանած լինել իմաստը կամ ենթարկվել իմաստային տարբեր փոփոխությունների: Իմաստափոխության դրսևորումներից մեկը քննվող բառերի՝ դարձվածների կազմում հանդես գալու իրողությունն է: Դարձվածները հիմնականում կազմված են փոխառյալ ստորադաս և հայերեն գերադաս բաղադրիչներից: Հաղորդակցական արժեք ունեցող, այսինքն՝ նախադասություն դարձվածային միավորները անհամեմատ քիչ են, դրանք ունեն հիմնականում պարզ կառուցվածք, կան նաև միակազմ նախադասություն դարձվածային միավորներ: Անվանողական արժեք ունեցող դարձվածային միավորներն ունեն բոլոր ենթատեսակները՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող: Գոյականական և ածականական դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ են, շատ քիչ են մակբայական և եղանակավորող դարձվածային միավորները: Բայական դարձվածային միավորները բնորոշվում են բաղադրիչների տարաբնույթ հարաբերություններով և քանակով գերազանցում են մյուսներին: Դրանց մեջ զգալի մաս են կազմում դարձվածի արժեք ստացած հարադրությունները: Բայական երկբաղադրիչ ստորադաս փոխառյալ բաղադրիչը գոյականն է, որը կարող է ձևավորվել տարբեր հոլովներով, կապով, ունենալ եզակի կամ հոգնակի թիվ, հանդես գալ հոդով կամ առանց հոդի: Փոխառյալ բաղադրիչով մի շարք դարձվածներ ռուսերենում ունեն նույն բառով կազմված համարժեք կամ առնչակից դարձված:

* Ներկայացվել է 14. XI. 2025 թ., գրախոսվել է 11. I. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Նախաբան

Փոխառությունները սովորաբար պայմանավորված են լինում ուրիշ ժողովուրդների հետ տվյալ ժողովրդի ունեցած երկարատև քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերով, բազմաթիվ ազգակից և ոչ ազգակից լեզուների հետ տվյալ լեզվի շփումներով ու փոխադարձ ազդեցությամբ: Հայերենի բազմաբնույթ հարաբերությունները հարևան լեզուների հետ ամենից առաջ ու առավել ակներև արտացոլվում են նրա բառային կազմի մեջ:

Հայոց լեզվի բառապաշարը գտնվում է անընդհատ զարգացման, հարստացման գործընթացում, որի հիմնական միջոցները եղել և մնում են լեզվի ներքին հնարավորությունները՝ բառակազմական կաղապարներով սեփական, նաև փոխառյալ բաղադրիչներից նոր բառերի կերտումը, լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի բառիմաստի ընդլայնումը կամ նեղացումը, փոխաբերական իմաստով գործածելը և այլն: Ընդհանուր առմամբ, « ... փոխառությունները թեև դիտվում են իբրև լեզվի բառապաշարի հարստացման օժանդակ միջոց, սակայն նրանց դերը պակաս կարևոր չէ հայերենի բառային կազմի լրացման և ընդլայնման գործում»¹:

Ռուսերենից (և ոչ միայն) փոխառված բառերի յուրացման գործընթացում հայերենը դրանք ենթարկում է հնչյունական, ձևաբանական, իմաստային յուրացման: Իրողությունը վերաբերում է ոչ միայն գրական լեզվին, այլև նրա տարածական տարբերակներին՝ բարբառներին:

Ղարաբաղի բարբառը հայերենի գործածական տարածական տարբերակներից ամենակենսունակն ու տարածվածն է, որով հաղորդակցվում են Լեռնային Ղարաբաղի ու Սյունիքի բնակչության մեծ մասը և աշխարհի տարբեր երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում բնակվող նրանց հարազատները²: Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համաձայն՝ այն ընդգրկվում է -ում ճյուղի³, ըստ հնչյունական դասակարգման՝ առաջին տեղաշարժի ենթարկված⁴, իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի⁵ մեջ: Ղարաբաղի բարբառի մեջ են ընդգրկվում նաև Գորիսի և Հաղորթի ենթաբարբառները⁶, չնայած որոշ լեզվաբաններ դրանք համարում են առանձին բարբառներ⁷:

Ղարաբաղի բարբառում զգալի թիվ են կազմում պարսկերենից, արաբերենից, թյուրքական լեզուներից կատարված փոխառությունները, սակայն առավել շատ են ռուսերենից անցած բառերը⁸, որոնց թիվը հասնում է շուրջ

¹ Ֆ ա լ ա կ յ ա ն. 1985, 168:

² Ս ա ր գ ս յ ա ն, Մ ի ն ա ս յ ա ն. 2025, 57:

³ Ա ճ ա ռ ե ա ն. 1911, 54:

⁴ Ղ ա ր ի բ յ ա ն. 1947, 30:

⁵ Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 136:

⁶ Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 136:

⁷ Պ ո ղ ո ս յ ա ն. 1965, Մ ա ր գ ա ր յ ա ն. 1975:

⁸ Ռուսերենից կատարված փոխառություններ ենք համարել նաև այն բառերը, որոնք այլ, հատկապես եվրոպական լեզուներից Ղարաբաղի բարբառին են անցել ռուսերենի միջնորդությամբ:

2500-ի⁹, ինչն ամենից առաջ կապվում է 1822 թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840 թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868–1917 թթ.¹⁰ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Անշուշտ, ռուսերեն փոխառյալ բառերի առատությունը պայմանավորված է նաև XIX դարի կեսերից երկրամասում ռուսական զինվորական ստորաբաժանումների, իսկ խորհրդային տարիներին՝ մի շարք բնակավայրերում ռուսական դպրոցների առկայությամբ:

Իմաստափոխված ռուսերեն բառերը Ղարաբաղի բարբառի դարձվածներում¹⁰

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերենից փոխառյալ բառերը՝ որպես կենդանի բարբառի բառապաշարի մաս, ենթակա են տարբեր փոփոխությունների: Ռուսերենում ունեցած իրենց իմաստների համեմատությամբ՝ փոխառյալ բառերը բարբառում կարող են պահպանված լինել իրենց իմաստը կամ ենթարկվել իմաստային տարբեր փոփոխությունների: Իմաստային փոփոխության մի դրսևորում է նաև քննվող բառերի՝ դարձվածների կազմում հանդես գալը, քանի որ դարձվածի ամենակարևոր հատկանիշներից մեկը վերաիմաստավորումն է:

Պետք է նշել, որ նման դարձվածները հիմնականում կազմված են փոխառյալ և հայերեն բաղադրիչներից, մինչդեռ միայն փոխառյալ բաղադրիչներից կազմված միավորները շատ քիչ են, ինչպես՝ գրրամ /грамм/ – գրրամ /грамм/, կարդոնի /картонный/ յաշիգ՝ /ящик/ (խախուտ, ոչ ամուր), մայկա /майка/ – տըրուսիկ труссы/ (ներքնաշորեր), յերալաշու /ералаш/ մատարյալ /материал/ (ծաղրի՝ ծիծաղի առարկա), նեմեցու /немец/ պայոկ /паяк/ (փոքր սննդաբաժին, քիչ ուտելիք), սուխոյ /сухой/ աթկազ /отказ/ (լրիվ մերժում), վեդրա /ведро/ – վեդրա (առատորեն):

Մի քանի դարձվածներ ունեն փոխառյալ երկու բաղադրիչ՝ ըստաքան /стакан/ ըստըքանու թըխել (իբրև բարեկամության նշան՝ բաժակները իրար խփել և միասին խմել), կըպէկին /копейка/ ըզդրաստի /здравствуй/ աւել // չէստ /честь/ տալ (ֆինանսական ծանր կացության մեջ լինել), պապըոզը /папироса/ պապըոզան նի կըցնել (հաճախ ծխել), պարտիյնի /партийный/ բիլէթը /билет/ ծերքան ինք՝ օնել // յօր օնել (կուսակցությունից վտարել):

Որոշ դարձվածներ էլ կազմվել են ռուսերենից փոխառյալ արմատից ու հայերեն արմատից և (կամ) ածանցից բաղադրված բառից, ինչպես՝ կըպըկանուց // մընըթանուց շինիլ (հեղինակագրկել), կըպըկանուց (копейка + անուց) // մընըթանուց (монета + անուց) տը՛ռնալ (հեղինակագրկվել), մամաքուրի (мама + քուր+ի) տալ (մեկի հետ մտերիմ, համերաշխ լինել), սուկըհան (сок + հան) ինիլ

⁹ Ս ա ր գ ս յ ա ն. 2013:

¹⁰ Բոլոր օրինակները բերվում են ըստ Ա. Սարգսյանի (Ս ա ր գ ս յ ա ն. 2013), Ա. Սարգսյանի, Շ. Մինասյանի (Ս ա ր գ ս յ ա ն, Մ ի ն ա ս յ ա ն. 2017) բառարանների և Շ. Մինասյանի (Մ ի ն ա ս յ ա ն. 2007) մենագրության՝ համեմատությամբ Լ. Անտոնովայի (Антонова. 2025), Ա. Տիխոնովի (Тихонов. 2004), Ս. Օժեգովի (Ожегов. 2018) և Պ. Բեդիրյանի (Բ ե դ ի ը յ ա ն. 2011) բառարանների:

// տը՛ռնալ (1. հյուսթը քամվել, մզվել, 2. չարչարվել, կեղեքվել, ուժասպառ լինել) և այլն:

Ռուսերեն փոխառյալ բաղադրիչով դարձվածային միավորները քննվում են՝ 1) ըստ հաղորդակցական արժեքի, 2) ըստ խոսքիմասային պատկանելության, 3) ըստ ռուսերենում համարժեքը ունենալու հանգամանքի:

Փոխառյալ բաղադրիչով դարձվածների դասակարգումը ըստ հաղորդակցական արժեքի

Ըստ հաղորդակցական արժեքի՝ դարձվածները լինում են հաղորդակցական արժեք ունեցող և անվանողական արժեք ունեցող: Դրանց տարբերությունը պայմանավորված է նրանով, որ «դարձվածային միավորները մի դեպքում վերախմաստավորված կերպով նշում են առարկան, փաստը, երևույթը, ինչպես նաև սրանց հատկանիշները, իսկ մյուս դեպքում դատողություններ են առարկաների, երևույթների ու դրանց հատկանիշների վերաբերյալ. առաջին դեպքում դարձվածային միավորները հանդես են գալիս անվանողական արժեքով և համարժեք են բառերին, երկրորդ դեպքում դրանք հաղորդակցական արժեք են ձեռք բերում և հարաբերակից են նախադասություններին»¹¹:

Փոխառյալ բաղադրիչով նախադասություն դարձվածային միավորները, ունենալով հարացուցային արտահայտության սահմանափակ հնարավորություն, բարբառում քիչ են, եթե, իհարկե, հաշվի չառնենք բայական այն դարձվածային միավորները, որոնց գլխավոր անդամ անորոշ դերբայը կարող է հանդես գալ նաև դիմավոր ձևով՝ վերածելով բայական դարձվածային միավորները նախադասություն դարձվածային միավորների: Նախադասություն դարձվածային միավորները հիմնականում ունեն պարզ նախադասության կառուցվածք, միայն մի քանիսն են բարդ նախադասության կառուցվածքով՝ ըրբաշկան /рубашка/ էլ չի կարում, թա մար տա (ասում են ինքնուրույն գործելու ընդունակությունից զուրկ՝ անճարակ մարդկանց մասին), լենինը /ленин/ մը՛ռալ ա, ըստալինը /сталин/ էն ա սաղ¹² (դաժանությունները դեռ շարունակվում են), մը՛զ յէկավ՝ լենինը մը՛ռալ (ասում են այն ժամանակ, երբ անհրաժեշտության դեպքում մի բան սպառվում է, խափանվում է), ներքէ պըռօշը պօլըն /пол/ ա սիրփում, յը՛րէ պըռօշը՝ պատալօկը /потолок/ (ասում են շատ ծեր մարդկանց մասին):

Պարզ կազմություն ունեցող նախադասություն դարձվածային միավորները կարող են լինել համառոտ՝ կօզընէն /козырь/ ծէրքէն ա (իրավիճակի վրա ազդելու մեծ հնարավորություն ունի), նավթալինավը՛տ /нафталин/ ա կամ (հին է), չինէրը /чин/ վէր ը՞ն ուննան (հեգնաբար ասում են նրան, ով, պատվից ցածր համարելով, հրաժարվում է որևէ բան անելուց), փասօնըտ /фасон/

¹¹ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 90:

¹² Հաշվի առնելով, որ Վ. Ի. Լենինն ու Ի. Վ. Ստալինը եղել են Խորհրդային Միության ղեկավարներ և ուղղակի կամ անուղղակի առնչվում են ռուսական իրականությանը, նաև հաշվի առնելով այն, որ այդ անձնանունները վերածվել են հասարակ անունների (գրվում են փոքրատառով)՝ դրանցով կազմված դարձվածները ևս համարել ենք ռուսերենից փոխառյալ բաղադրիչով դարձվածներ:

կըտրըվէ (մեռնես, չքանաս – գործածվում է որպես անեծք), և ընդարձակ՝ էս հալիւմ ժուռնալըն /журнал/ ա (դեռ ամեն ինչ նոր է սկսվում, դեռ շարունակություն կլինի), էրկու ժուլիգի /жулик/ անա շընըկօտէգ՝ կինի (խորամանկ ամուսինների գավակը կգերազացի ծնողներին), էրկու կիլօ /кило/ կարու նըհըտ փօխէլ չըմ (ասում են անարժան մարդու՝ իրի մասին), ժուլիգ՝ /жулик/ դուշը կըտուցան ա թալակ ընգնում (շատ խորամանկը առավել է տուժում), լամբը /лампа/ ուրան տակէն իշէղ չի տալ (որևէ բան՝ երևոյթ հեռվից ավելի հեշտ է նկատվում, գնահատվում), հիբը խօզը տուռնիգ՝ /турник/ ածէ (երբեք, ոչ մի դեպքում), մին պօլկ /полк/ սըլդաթու մաչի կըկէնա (ասում են համարձակ, հանդուգն կանանց՝ աղջիկների մասին) :

Բոլոր նախադասություն դարձվածային միավորներում ստորոգյալը երրորդ դեմք ունի, իսկ մի քանիսը ձևական դիմավոր միակազմ նախադասության կառուցվածք ունեն՝ մօդում /мода/ ա //մօդա յա (նորաձև է, հասարակության կողմից ընդունելի է), չինէրը /чин/ վէր չի կըլան // պագօննէտ /погон/ վէր ը՞ն ուննան (քո հեղինակությունը չի տուժի): <Ետաքրքիր է, որ դրանց մի մասը հարցում – ժխտում է արտահայտում, ինչպես՝ լենինը /ленин/ քիննան ա, ըստալինը /сталин/ կա՞ // լենինը /ленин/ քիննան չի, ըստալինը /сталин/ կըլան չի (պատվավոր հյուրերի չեմ սպասում), կապէկըս /копейка/ մաչին քէցալ ա՞ // կապէկըս մաչին քէցալ չի (ինձ ի՞նչ փոյթ, ես դրա վրա փող չեմ ծախսել), պաժառ /пожар/ ա՞ // պաժառ չի (շտապելու կարիք չկա):

Փոխառյալ բաղադրիչով անվանողական դարձվածները ըստ խոսքիմասային պարկանելության

Անվանողական դարձվածային միավորների մի մասը վերաիմաստավորված նշում է որևէ անձ, առարկա կամ երեւոյթ, մյուս մասը՝ հատկանիշ, կան նաև խոսողի դատողական ու գնահատողական վերաբերմունք արտահայտող դարձվածային միավորներ: Ըստ ռուս լեզվաբան Ա. Մոլոտկովի՝ այս կարգի դարձվածները իրենց իմաստով բառեր են, իսկ կառուցվածքով՝ կայուն բառակապակցություններ, այսինքն՝ դրանք արտահայտության պլանում բառակապակցություններ են, իսկ բովանդակության պլանում՝ հասկացություններ¹³:

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչով ոչ հաղորդակցական դարձվածային միավորները, ըստ ձևաբանական դասակարգման, ունեն գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող տեսակներ: Ընդ որում՝ «... ամեն մի խոսքի մասին հարաբերակից դարձվածային միավոր առաջին հերթին իմաստային առումով պետք է տվյալ խոսքի մասին փոխարինի. այս դեպքում պարտադիր չէ, որ, ասենք, ածականական դարձվածը անպայման ածականներից կազմված լինի, կամ նրա բաղադրիչներից մեկը լինի ածական»¹⁴: Այդ պատճառով, « ... երբ խոսվում է դարձվածային միավոր-

¹³ Молотков. 1977, 15.

¹⁴ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 92:

ների իմաստի և ձևաբանական արժեքի մասին, նկատի է առնվում կապակցության միջոցով ձևավորված հասկացությունը, նրա՝ որևէ խոսքի մասին համարժեք լինելը, այլ ոչ թե բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը»¹⁵:

Գոյականական դարձվածային միավորները սովորաբար երկբաղադրիչ են, հատուկենտ են եռաբաղադրիչ միավորները, ինչպես՝ կրնյազ /князь/ Կուսու-զովեն թօնը//տըղան//ախճիգը (արտոնություն ունեցող մեկը), ռուսու /русский/ բարուշկու /бабушка/ քամակ (1. շատ կարմրած, 2. ծավալուն, մեծ):

Բաղադրիչների միջև հիմնականում ստորադասական հարաբերություն է, բացառությամբ որոշների՝ մայկա /майка/ – տըրուսիկ /трусь/ (ներքնաշորեր), վէդրա /ведра/ – վէդրա (առատորեն): Փոխառյալ բաղադրիչը կարող է լինել ինչպես գերադաս անդամը՝ էշու դոխտուր /доктор/ (անասնաբույժ), էրկու կապէկ /копейка/ (չնչին գումար), կօտրած պըլաստինկա /пластинка/ (նույն բանը տհաճորեն կրկնող մարդ), ճանջու զակուսկի /закуска/ (1. քիչ ուտելիք, 2. հեգն. փոքրամարմին էակ), մադամ /мадам/ բիզ – բիզ (հեգն. մոդայամուլ կին), մըռալու ըզդաչի /сдача/ (հյուծված, նիհար, զունատ մարդ), յէրէ ատաժ /этаж/ (1. գլուխ, 2. խելք), այնպես էլ՝ ստորադաս անդամը, որը հիմնականում տրական հոլովով արտահայտված գոյական է՝ ըստըքանու /стакан/ հընգէր (մեկի հետ կերուխումի մշտական ընկեր, բաժակակից), կալխօզու /колхоз/ ժօղօվ (խառնաշփոթություն, իրարանցում), յէվրէյու /еврей/ ճօտ (1. անխիղճ ու կծծի մարդ, 2. խորամանկ մարդ), պըրիստավէն /пристав/ ախճիգը // տըղան // թօնը (արտոնյալ, արտոնություններ ունեցող անձ), փօշտու /почта/ թընըկաման (անբարոյական կին), փօշտու /почта/ ճօրէ (շատ չարչարվող մարդ): Ինչպես երևում է բերված օրինակներից, բաղադրիչների միջև առկա են հատկացուցիչ-հատկացյալ և որոշիչ-որոշյալ հարաբերությունները: Նման դարձվածներում գերադաս անդամն ունի ուղիղ ձևավորվածություն՝ հողով (նէմէջին /немец/ կըռըվը (1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը) կամ առանց հողի (ցիրկու /цирк/ մէյմուն (անլուրջ, թեթևաուլիկ անձ՝ խեղկատակ), բայց խոսքում հանդես գալով՝ կարող է թվային և հոլովական տարբեր ձևափոխությունների ենթարկվել՝ կախված դարձվածի՝ նախադասության մեջ կատարած շարահյուսական պաշտոնից:

Չնչին բացառությամբ ածականական դարձվածային միավորները ևս երկբաղադրիչ են՝ կամսամօլէն /комсомол/ զընիշկան /книжка/ կուռնըտակէն (կոյս՝ նորահարսի մասին), կամսամօլէն զընիշկան կուրցըրած (մինչև ամուսնանալը կուսությունից զրկված): Գերադաս անդամը կա՛մ ածական է՝ բաշքօրտ /паспорт/ ըստացած (չափահաս), զըրուշկու /кружка/ ծիլած (վտիտ, նիհար), կատիլօկը /котелок/ տէրտակ (հիմար), մուզէյում /музей/ տինիլի (հազվագյուտ), պըրուժիննէն /пружина/ բօշ // թուլ (խելապակաս), կա՛մ դէրբայ (ենթակայական կամ հարակատար)՝ կատու կըրասկա /краска/ տըվօղ (խորամանկ, զեղծարար), կափսուլնէն /капсюль/ տիուս տըված (խելապակաս), կըզըրօկը /козырек/ պուք տըվօղ (առույգ, կայտառ, ճարպիկ), կըպէկու /копейка/ հը՛տա¹⁶ մը՛ռած (խիստ ժլատ), հինգիստարանան օտպուսկ /отпуск/ յէկած (զունատ, վտիտ), նէրվը

¹⁵ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 92:

¹⁶ Կապը՝ որպես թերիմաստ խոսքի մաս, դարձվածի, նաև բառակապակցության առանձին բաղադրիչ չի համարվում:

/неб/ հանած // տոնու կալած (սառնասիրտ, չբորբոքվող), սէպարատոր/ քաշած (շատ նիհար, վտիտ, հյուծված), սրբոկը /срок/ ընցած (փչացած՝ մթերքի մասին), վաղզալան /вокзал/ փրոնած (պատահական ծանոթ): Որոշ դարձվածներ կազմվել են գոյական գերադաս անդամով՝ աշկերը վրխահնայում /выходной/ (վատ տեսողություն ունեցող), դիպլոմը /диплом/ կուռնրտակէն (բարձրագույն կրթություն ունեցող), խօղ /ход/ տուված ռադիօ /радио/ (շատախոս, շաղակրատ), կիտայսկի /китайский/ տախտէղ (1. շատ կծու, 2. սուր, խայթող լեզու ունեցող):

Հատուկենտ են միագագաթ ածականական դարձվածային միավորները՝ յառլիգը /ярлык/ յըրա (1. նոր, 2. կույս), փօրմու /форма/ հըտէ//մըհար (ձևակա-նորեն):

Բայական դարձվածային միավորները քանակապես ամենաշատն են, գործածությամբ՝ ամենահաճախականը, կառուցվածքով՝ ամենաբազմազանը: Դրանց մեջ զգալի տեղ են գրավում բայական հարադրավոր կազմությունները, որոնցում փոխառյալ է անվանական բաղադրիչը: Լեզվաբանության մեջ վիճելի հարցերից մեկը հարադրական բայերի ու դրանց վերաիմաստավորումից առաջացած բայական դարձվածների սահմանների որոշումն է: Շատ լեզվաբաններ են անդրադարձել այս հարցին՝ փորձելով տալ հարադրիչներից առաջացած դարձվածային միավորների և սովորական հարադրական բայերի նմանությունն ու իմաստային տարբերությունները: Ընդհանուր առմամբ նրանց կարծիքներն այնքան էլ տարբեր չեն, քանի որ բոլորն էլ ելնում են հարադրության բաղադրիչների իմաստափոխությունից ու վերաիմաստավորումից¹⁷: Հայերենի հարադիր բայերի և դրանցից առաջացած բայական դարձվածային միավորների լավագույն քննությունը կատարել է Ա. Մարգարյանը՝ սահմանելով հարադրավոր բայերից առաջացած դարձվածային միավորները. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում և հանդես են գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»¹⁸:

Ըստ անվանական բաղադրիչի քերականական արժեքի՝ հարադրության կառուցվածք ունեցող բայական դարձվածային միավորները բաժանվում են երկու մասի՝ 1) բայական հարադրավոր կազմություններ, որոնց ստորադաս բաղադրիչը փոխառյալ գոյական է, 2) բայական հարադրավոր կազմություններ, որոնց ստորադաս բաղադրիչը ռուսերենի՝ բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ինֆինիտիվն է:

Բայական հարադրությունների մեջ զգալի տեղ են գրավում այն հարադրավոր կազմությունները, որոնցում փոխառյալ է անվանական բաղադրիչը: Փոխառյալ գոյական բաղադրիչով բայական հարադրությունները հիմնականում կազմվում են. ա) անէլ՝ ավզօն /обгон/ անէլ (մեկին մի բանում գերազանցել), լօղրօթուն /лодырь/ անէլ (ծովանալ, գլուխ պահել), կըլիզմա /клизма/ անէլ (անարգ. խիստ հանդիմանել՝ պատժել), կըվիտ /квит/ անէլ (այլևս պահանջ,

¹⁷ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 164:

¹⁸ Մ ա ր գ ա ր յ ա ն. 1966, 225:

պարտք չունենալ), կինոդամոյ /кино+домой/ անել (առանց հարսանիքի ամուսնանալ, կինոյից հետո նշանածին տուն բերել), չաշկա-լոշկա /чашка-ложка/ անել (սիրաբանել, սիրային խոսակցություն վարել), տոլկ /долг/ անել (գրավ դնել), ուռռա /ура/ անել¹⁹ (1. ցնծությունից, հիացմունքից գոռալ, 2. առանց հաշվի առնելու հանգամանքները որևէ բան անել, 3. գործը արագ ու անորակ անել), փանտան /фонтан/ անել (ուժգին հոսանքով շատրվանի նման ժայթքել, ցայտել, բխել), բ) ընգնել²⁰ ազարտ /азарт/ ընգնել (կրքոտվել, մոլուցքի պահին ինքնամոռացության մեջ ընկնել), դումկա /думка/ ընգնել (մտքերի մեջ խորասուզվել, մտածմունքի մեջ ընկնել, մտմտալ), լատարեյը /лотерея/ ընգնել (անակնկալ մեծ հաջողության հանդիպել), պաժառ /пожар/ ընգնել (հրդեհվել), պանիկա /паника/ ընգնել (խուճապ առաջանալ), ռէժիմո /режим/ ընգնել (կարգավորվել), տիորմա /тюрьма/ ընգնել (բանտարկվել), գ) տալ՝ բաղաժ /багаж/ տալ (բեռնավորել, փոխադրելի ծանրությունը փոխադրական միջոցների վրա կամ մեջ դնել), լոսբ /лоб/ տալ (ուժեղ հարվածել), կարտե /карта/ տալ (թղթախաղով զբաղվել), կրասկա /краска/ տալ (կեղծել, արտաքին ձևով բուն էությունը թաքցնել), չէստ /честь/ տալ (մեկին կուրորեն ենթարկվել՝ մեծարել), չոթկը /щетка/ տալ (խոզանակել), տորմոզ /тормоз/ տալ (ինչ-որ գործողություն դադարեցնել), դ) տը՛ռնալ՝ մազոլ /мозоль/ տը՛ռնալ (կոշտանալ, կարծրանալ), նոլ /ноль/ տը՛ռնալ (1. արդյունք չստանալ, երախտիքը իզուր անցնել, 2. անարժեք դառնալ), նոս /нос/ տը՛ռնալ (արհամարհվել), պրոպոսկա /прописка/ տը՛ռնալ (1. մեկի՝ որևէ տեղում բնակվելը պաշտոնական փաստաթղթով վավերացվել, գրանցվել, 2. հեզն. որևէ տեղում հաճախակի լինել), վերացական բայերով:

Որոշ դեպքերում փոխառյալ նույն բաղադրիչը հարադրություն-դարձված է կազմում զուգահեռաբար տարբեր բայերի հետ՝ արտահայտելով նույն կամ բայի սեռով պայմանավորված՝ հակառակ իմաստներ: Նույնիմաստ հարադրություններ են կազմվել. ա) անել // կոխել // նըստըցընել՝ տիորմա /тюрьма/ անել // կոխել // նըստըցընել (կալանավորել, բանտ նստեցնել), բ) անել // շինիլ՝ պուբլիկացի /публикация/ անել // շինիլ (մամուլում հրապարակել), գ) անել // տալ՝ պարելկա /побелка/ անել // տալ (կրաջրով սպիտակեցնել), նակազաննի /наказание/ անել // տալ (պատժել), դ) ընգնել // ինիլ՝ դումկա /думка/ ընգնել // ինիլ (մտքերի մեջ խորասուզվել, մտածմունքի մեջ ընկնել, մտմտալ), ե) ընգնել // տը՛ռնալ՝ մո՛դա /мода/ ընգնել // տը՛ռնալ (1. իբրև մոդա ընդհանրանալ, 2. ավանդույթ դառնալ), գ) ընցընել // տը՛ռնալ՝ զարաժէննի /заражение/ ընցընել // տը՛ռնալ (վարակվել), է) ինիլ // տը՛ռնալ՝ ըռաշոտ /расчет/ ինիլ // տը՛ռնալ (որևէ բանի կամ որևէ մեկի հետ հաշիվները վերջացնել), կրվիտ /квит/ ինիլ //

¹⁹ Այս հարադրության ստորադաս բաղադրիչը ձայնարկություն է, որը, փոխաբերական իմաստով գործածվելով, նյութական իմաստ է ստացել:

²⁰ Ընգնել բայով և մոդա փոխառյալ բաղադրիչով կազմվել են երկու հակառակ իմաստ ունեցող հարադրություններ, որոնց իմաստային հականիշությունը ստեղծում է մոդա բառի՝ տարբեր շեշտադրումներով հանդես գալը՝ մո՛դա ընգնել (1. իբրև մոդա ընդհանրանալ, 2. ավանդույթ դառնալ) և մոդա՛ ընգնել (մոդա լինելուց դադարել, այլևս մոդայական չլինել):

տրե՛նալ (այլևս պարտք, պահանջ չունենալ), ը) կաղնել // վրե՛նը կէ՛նալ՝ աթկազ /отказ/ կաղնել // վրե՛նը կէ՛նալ (հրաժարվել), թ) տալ // քրցիլ՝ պաժառ /пожар/ տալ // քրցիլ՝ (հրդեհել), սուդի /суд/ տալ // քրցիլ (մեկի դեմ դատական գործ հարուցել), և այլ բայերով:

Հակառակ իմաստ արտահայտող հարադրություններ են կազմվել անէլ-ինիլ // տրե՛նալ՝ փուկ /фук/ անէլ (դուրս թողնել, մասնակից չդարձնել) – փուկ ինիլ // տրե՛նալ (դուրս թողնվել, մասնակից չդառնալ), ընգնել – քրցիլ՝ ըշտրափու /штраф/ տակ ընգնել (տուգանվել) – ըշտրափու տակ քրցիլ (տուգանել), նագրուզկու /нагрузка/ տակ ընգնել (ծանրաբեռնվել) – նագրուզկու տակ քրցիլ (ծանրաբեռնել), պանիկա /паника/ ընգնել (խուճապ առաջանալ) – պանիկա քրցիլ (խուճապ առաջացնել), վէր օնէլ – վէր կ'ալ՝ չինէրը /чин/ վէր օնէլ (աստիճանից՝ կոչումից՝ պաշտոնից գրկել) – չինէրը վէր կ'ալ (աստիճանից՝ կոչումից՝ պաշտոնից գրկվել), շինիլ – տրե՛նալ՝ պուբլիկացի /публикация/ շինիլ (հրապարակել) – պուբլիկացի տրե՛նալ (հրապարակվել), տրյափկա /тряпка/ շինիլ (վարկաբեկել, հեղինակագրկել) – տրյափկա տրե՛նալ (վարկաբեկվել, հեղինակագրկվել), և այլն:

Բայական հարադրավոր այն կազմություններում, որոնց ստորադաս բաղադրիչը ռուսերենի՝ բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ինֆինիտիվն է, հիմնականում հանդես է գալիս անէլ բայը, ինչպես՝ զանիտ /занять/ անէլ (զբաղեցնել), զուբրիտ /зубрить/ անէլ (մի բան շատ լավ սովորել, իմանալ), ժարիտ /жарить/ անէլ (1. յուղի մեջ առանց ջրի եփել՝ տապակել), 2. մեկին հոգեկան տառապանք, տանջանք պատճառել, 3. կոտորել, 4. շատ վարժ խոսել, ճառախոսել), ծապնուտ /тяпнуть/ անէլ (հեզն. կոնծել), նարուշիտ /нарушить/ անէլ (կարգը խախտել), շրպարիտ /шпарить/ անէլ (ջեշտակի՝ ուժգին ինչ-որ բան անել), պադավատ /подавать/ անէլ (հրամցնել մատուցել), պապրավիտ /поправить/ անէլ (գլուխը խուզել, մազերը կարգի բերել), ռուլիտ /рулить/ անէլ (կառավարել, ղեկավարել), տէրպէտ /терпеть/ անէլ (համբերել): Այս հարադրությունների իմաստները հիմնականում ելնում են փոխառյալ բառի որևէ իմաստից կամ իմաստներից: Առանձնանում են ժարիտ /жарить/ անէլ և պապրավիտ /поправить/ անէլ դարձվածները, որոնցում վերաիմաստավորումն ավելի ուժեղ է: Ժարիտ անէլ-ի երկրորդ, երրորդ և չորրորդ իմաստները ռուսերենի жарить (1. готовить, держать на сильном жару без воды, в масле, жире, 2. подвергать действию сильного жара, 3. обжигать лучами /о солнце/) բառը չունի, իսկ պապրավիտ անէլ-ը ռուսերենի поправить (1. исправить, 2. указать кому-то на его ошибку, 3. привести в порядок, сделать лучше) բառի իմաստներից միայն երրորդի հետ ունի հեռավոր կապ:

Որոշ դարձվածներ կազմվել են ինիլ և տրե՛նալ բայերով՝ զանիտ /занять/ ինիլ // տրե՛նալ (սիրած ունենալ), ժարիտ /жарить/ ինիլ // տրե՛նալ (1. յուղի մեջ առանց ջրի եփվել՝ տապակվել, 2. մեկից, մի բանից հոգեկան տառապանք, տանջանք ունենալ, 3. կոտորվել), յավից /явиться/ ինիլ (որևէ նպատակով մի տեղ՝ հիմնարկություն կամ որևէ անձի մոտ գնալ՝ գալ՝ ներկայանալ), նարուշիտ /нарушить/ տրե՛նալ (կարգը խախտվել):

Բայական երկբաղադրիչ դարձվածային միավորների ստորադաս անդամը մեծ մասամբ գոյական է, որը կարող է դրվել. ա) ուղղական՝ ադրէսը /адрес/

կուրցընել (շփոթվել, մոլորվել, ինչ անելը չիմանալ), ախտը /акт/ կապել (1. մահվան շեմին լինել, 2. ավարտին՝ պաշտոնանկ արվելուն մոտ լինել), դէպուտատատ /депутат/ անց կըցնել (ներել, չարչարել), կազէթ /газета/ քըցիլ (հրապարակել), դարավուլ /караул/ քաշիլ (պահակ կանգնել), ներվը /нерв/ օտել (դիտավորյալ որևէ մեկին գրգռել, ջղայնացնել), բ) տրական՝ ըշփիշկու /спичка/ կարօփկա /коробка/ տըճնալ (վթարի ենթարկվել՝ ավտոմեքենան լրիվությամբ ջարդվել), ըշփիշկու /спичка/ չօփ տըճնալ (նիհարել, հյուծվել), շօտու /учет/ կաղնել (գրանցվել, հաշվառման մեջ մտնել), չօթկէն /щетка/ տակը տալ (համրիչով հաշվել, քանակը՝ գինը որոշել), դիսկու /риск/ քինիլ (հանդգնել, համարձակվել), ռուլին /руль/ նըստել (մեքենա վարել), գ) բացառական՝ ըռամկան /рамка/ տիուս կիլ (պատշաճ սահմաններից դուրս գալ, կարգը խախտել), դ) գործիական՝ ներվավը /нерв/ խաղ անել (դիտավորյալ մեկին գրգռել, ջղայնացնել), ե) ներգոյական՝ ըռամկու /рамка/ պահել (հսկել, զսպել, չթողնել, որ չափն անցնի), հոլովներով: Դրանց մեջ գերակշռում են ուղղական հոլովով դրված ստորադաս անդամ ունեցող դարձվածային միավորները, որոնց բաղադրիչների միջև կարող են լինել. ա) ենթակայական՝ զավօղը /завод/ կապվել (այլևս չձննդաբերել), ըստօղը /стол/ թըքանալ (խնջույքն աշխուժանալ), լատարելը /лотерея/ ընգնել (անակնկալ մեծ հաջողության հանդիպել), պերանը պաժառ /пожар/ ընգնել (ուտելու մեծ ցանկություն ունենալ), բ) ուղիղ խնդրային՝ արէնտիրը /ориентир/ կուրցընել (շփոթվել, մոլորվել, չկողմնորոշվել), կըրվաթ /кроваты/ քըշիլ (ոչինչ չանել, ամբողջ օրը հանգստանալ), մազգին /мозг/ կըրուտիտ անել (մեկի մտադրությունը՝ գաղտնիքները և այլն իմանալու համար խոսեցնել՝ հարցուփորձ անել), պըլաստինկան /пластинка/ փոխել (խոսակցության նյութը՝ թեման փոխել), պըրօբը /проба/ տըճնալ (փորձել, համտեսել), փազերը քըցիլ /фаза/ խելքը թոցնել, խենթանալ, գ) տեղի պարագայական՝ զազա /ЗАГС/ քիինիլ (ամուսնությունը օրինականորեն գրանցել), կազէթ /газета/ ընգնել (լրագրի նյութ դառնալ), սիբիր /сибирь/ ղարկել // քըշիլ (աքսորել), ուզուլ /угол/ կաղնել (պատժվել), հարաբերություններ:

Որոշ դարձվածներում գոյականը հանդես է գալիս հոգնակի թվով՝ կարտերը /карта/ խառնել (ծրագրերը խախտել), կարտերը /карта/ պէց անել (մեկի գաղտնի մտադրությունները՝ ծրագրերը բացահայտել), շարիկնէն /шарик/ բուշանալ (հեգն. խելքը պակասել), վէշէրը /вещь/ հըրվաքել (հեռանալ, գաղթել, գաղթելուն պատրաստվել):

Գոյական ստորադաս անդամը կարող է ձևավորվել նաև կապով, ինչպես՝ առանց կըպէկի /копейка/ մընալ (ընդհանրապես փող չունենալ), ըստօլէն /стол/ յըրա մընալ (վիրահատվելիս մահանալ), կըլէյու /клей/ նըման նըստա կէնալ (մեկի հետ շատ մտերիմ լինել, շատ սիրել), կըպէկու /копейка/ հըճտէ տըղտօղալ // ըստակել // գիանքը տալ (խիստ ժլատ լինել), նագրուզկու /нагруз-ка/ տակ ընգնել (ծանրաբեռնվել), նագրուզկու /нагрузка/ տակ քըցիլ (ծանրաբեռնել), ամնիստյու /амнистия/ տակ ընգնել (համաներվել):

Բայական բազմաբաղադրիչ դարձվածային միավորները քիչ են՝ աշկէն տակէն փանար /фонарь/ տինիլ (բռունցքով աչքատակին հարվածելով՝ կապտուկ գոյացնել), ըռաշկէն դուժուռնի /дежурный/ վըճնը կէնալ (մեկին սպասարկել՝ ծառայել), ըստօլէն /стол/ յըճրէ կըլխէն նըստըցնել (հարգել, պատվել,

մեծարել), հրէտան պըրիգլասիտելնի /пригласительный/ դարկել (հանդիսավոր հրավիրել), յըհսան բըլափկա /булавка/ քաղել (ստիպել), յումբրուղը ըստուլեն /стол/ կ'ալ (սաստիկ բարկանալ), պարտիյնի /партийный/ բիլէթը /билет/ ծէրքան ինք' օնէլ // յօր օնէլ (կուսակցությունից վտարել), ռուլը /руль/ միշտ աջ ինիլ // շօռ տալ (բարեմաղթանք՝ վարորդներին, հատկապես նոր մեքենա գնելու առիթով):

Հետաքրքիր կազմություն ունի պաշյօլը քաշիլ դարձվածը, որի առաջին բաղադրիչը ռուսերենի *пояел* բայածնն է. վերջինիս իմաստին առնչվում է դարձվածի՝ բարբառում ունեցած իմաստը՝ վոնդվել, արտաքսվել (անրգ.):

Շատ քիչ են ա) մակբայական՝ ծուծուլ նա ծուծուլ /тютелька в тютельку/ (լիարժեք համընկնում, չափի առումով լրիվ ճիշտ), կապէկ /копейка/ – կապէկ /копейка/ (կոպէկ առ կոպէկ, քիչ-քիչ), մին մունուտումը /минута/ սէկունդումը /секунда/ (ակնթարթորեն, շատ արագ), վէդրա /ведро/ – վէդրա /ведро/ (առատորեն), փօրմու /форма/ հրէտէ // մըհար (ձևականորեն), բ) եղանակավորող՝ մամուն /мама/ արէվ (երդման արտահայտություն), պապուն /папа/ արէվ (երդման արտահայտություն), դարձվածային միավորները:

Փոխառյալ բաղադրիչ ունեցող դարձվածներն ըստ ռուսերենում համարժեք ունենալու հանգամանքի

Ընդհանրապես դարձվածաբանությունն աչքի է ընկնում ազգային ինքնատիպությամբ և կրում է այն ստեղծող ժողովրդի մտածողության յուրահատուկ կնիքը: Ինչպես նշում է դարձվածաբան Ա. Նազարյանը, «Դարձվածաբանության ազգային առանձնահատկությունները դրսևորվում են նրա ուսումնասիրության բոլոր տեսանկյուններով»²¹: Սակայն տարբեր լեզուներում կարող են լինել ընդհանուր նշանակության և նույն կամ նման կառուցվածք ունեցող դարձվածներ: Այդպիսի դարձվածների գոյության պատճառ կարող է լինել թարգմանությունը, որի միջոցով ամբողջ աշխարհի սեփականությունն են դարձել հին հունական ու լատինական մի շարք դարձվածներ՝ ավգյան ախոռներ, աքիլլեսյան գարշապար, գորդյան հանգույց, դանայան տակառ²², ինչպես նաև լեզվական աշխարհընկալման ընդհանրությունները: Պ. Բեդիրյանը ընդգծում է, որ հայոց լեզուն դարձվածների բնագավառում ևս սերտ կապեր ունի թե՛ արևելյան, թե՛ եվրոպական լեզվամտածողության հետ²³:

Հաշվի առնելով Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչով դարձվածների՝ ռուսերենում նույն բառով կազմված համարժեք կամ առնչակից դարձված ունենալու հանգամանքը՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

ա) Միայն փոխառյալ բաղադրիչներից կազմված և նույն իմաստն ունեցող դարձվածներ, որոնք ուղղակի ռուսերենից փոխառված դարձվածներ են և նույն իմաստով էլ գործածվում են բարբառում՝ *ноль внимания* (полное отсутствие интереса или невнимание к чему-либо или кому-либо) – նօլ վընիմաննի (բացարձակ անտարբերություն), *тютелька в тютельку* (совершенно точно, точь-в-точь) – ծուծուլ նա ծուծուլ (լիարժեք համընկնում, չափի առումով լրիվ

²¹ Назарян. 1976, 41.

²² Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 54:

²³ Բ ե դ ի ղ ա ն. 1973, 26:

ծիշտ): Կապէկ – կապէկ (կոպէկ առ կոպէկ, քիչ-քիչ) դարձվածի համարժեքը ռուսերենում կա՝ копейка в копейку (совершенно точно, точь-в-точь), բայց դարձվածների իմաստները լրիվ տարբեր են: Սուխոյ աթկազ արտահայտությունը բարբառում դարձվածի արժեք ունի և նշանակում է լրիվ մերժում, մինչդեռ ռուսերենում сухой отказ արտահայտությունը չի համարվում համընդհանուր գործածություն ունեցող կայուն կապակցություն:

բ) Ամենամեծ խումբը նույնիմաստ այն դարձվածներն են, որոնց անվանական բաղադրիչը փոխառյալ է, իսկ բայական բաղադրիչը նույնիմաստ հայերեն համարժեքն է, ինչպես՝ без копейки остаться (полностью лишиться денег) – առանց կրպէկի մընալ (ընդհանրապես փող չունենալ), впасть в панику (внезапно испытать сильный страх и растерянность, потерять контроль над собой) – պանիկա ընգնել (խուճապի մեջ ընկնել), курить папиросу за папиросой (много курить) – պապրոզը պապրոզան նի կըցընել (հաճախ ծխել), козырь // козыри в руках (кто-либо имеет преимущество в чем-либо) – կոզրընէն ծէրքէն ա (իրավիճակի վրա ազդելու մեծ հնարավորություն ունի), маменькин сынок (избалованный, изнеженный мальчик или молодой человек) – մամուն բալա (փափկասուն, դժվար իրավիճակներին անընտել մարդ), потерять адрес (потерять ориентировку, направление в жизни) – ադրէսը կուրցնել (շփոթվել, մոլորվել, ինչ անելը չիմանալ), смешать карты (разрушать, расстраивать чьи-либо замыслы, планы) – կարտէրը խառնել (մեկի ծրագրերը խառնել):

գ) Կան մի քանի նույնիմաստ դարձվածներ, որոնց հայերեն բաղադրիչը ռուսերեն գերադաս բաղադրիչի հոմանիշ է, ինչպես՝ держать оборону (упорно сопротивляться, не сдаваться) – արարօն փըռնել (պաշտպանողական դիրք գրավել), устраивать концерт (поднять шум, ругань) – կանցէրտ տալ (աղմուկ բարձրացնել ի նշան բողոքի), утратить чины (потерять должность) – չինէրը վէր օնէլ (աստիճանից՝ կոչումից, պաշտոնից գրկվել):

դ) Մի քանի դարձված, ունենալով ընդհանուր ռուսերեն բաղադրիչ, արտահայտում են առնչակից իմաստներ, բայց հայերեն բաղադրիչը չի համընկնում ռուսերեն դարձվածի մյուս բաղադրիչին, տարբեր են նաև դարձվածների խոսքիմասային պատկանելությունները: Орինակ՝ без чинов (без церемоний, просто, неформально) – չինէրը վէր կալ (աստիճանից, կոչումից, պաշտոնից գրկվել), как накрахмаленный (описывает человека, который держится очень строго, неестественно – կըրախմալ տըրված (փափկասուն, փափկակյաց), музейная редкость (не имеющее практического применения, вышедшее из употребления, устаревшее) – մուզէյում տինիլի (հազվագյուտ), пружины ослабли (человек стал вялым, немощным, утратил жизненные силы) – պըրուժիննէն բօշ // թուլ (խելապակաս):

ե) Փոխառյալ ընդհանուր բաղադրիչ ունեցող նույնիմաստ որոշ դարձվածներում մյուս՝ հայերեն բաղադրիչը բոլորովին այլ է, ինչպես՝ держать фасон (вести себя важно, важничать, форсить) – փափօն տալ (երկակայել), жать на газ (ускоряться, увеличивать скорость, придавать больше энергии, решительности чему-либо) – գազ տալ (ինչ-որ գործընթաց արագացնել), стоять как труба (быть неподвижным, застывшим, как столб, не двигаться, не проявлять активность) – դուրբա տըրնալ (ցցվել, անշարժ կանգնել):

Եզրակացություն

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչ ունեցող դարձվածները բնորոշվում են հետևյալ հատկանիշներով.

ա) դարձվածներն ունեն հաղորդակցական և անվանողական տեսակներ. նախադասություն դարձվածային միավորների մեջ առավել տարածված են պարզ կառուցվածք ունեցողները, կան նաև միակազմ նախադասություն դարձվածային միավորներ:

բ) Անվանողական դարձվածային միավորները հանդես են գալիս գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող տեսակներով, ընդ որում թե՛ քանակապես, թե՛ կառուցվածքային բազմազանությամբ քննվող դարձվածները համապատասխանում են գրական լեզվում գործող օրինաչափություններին:

գ) Գոյականական դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ են, ածականական դարձվածային միավորները կարող են կազմվել նաև առանց ածականի, շատ քիչ են մակբայական և եղանակավորող դարձվածային միավորները:

դ) Ամենամեծ խումբը կազմում են բայական դարձվածային միավորները, որոնց մի ենթատեսակը կազմող բայական հարադրությունները հանդես են գալիս երկու կաղապարով՝ անվանական փոխառյալ բաղադրիչ + հայերեն վերացական բայ (անել, տալ, ընգնել, տը՞ռնայ) և բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ռուսերեն ինֆինիտիվ + անել վերացական բայ: Բայական երկբաղադրիչ ստորադաս փոխառյալ բաղադրիչը գոյականն է, որը կարող է ձևավորվել ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, կապով, ունենալ եզակի կամ հոգնակի թիվ, հանդես գալ հոդով կամ առանց հոդի: Բազմաբաղադրիչ բայական դարձվածները քիչ են:

ե) Փոխառյալ բաղադրիչով դարձվածային միավորների մի մասը առնչություն ունի ռուսերենի համապատասխան դարձվածների հետ, ընդ որում կան առնչության տարբեր արտահայտություններ՝ ձևային, իմաստային, իմաստային առնչակցության և այլն:

Շողեր Մինասյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն, հայ բարբառագիտություն: Հեղինակ է 3 գրքի, համահեղինակ՝ 6 գրքի, շուրջ 30 հոդվածի:

ORCID: 0009-0003-5923-4020. shogermiasyan@gmail.com

Արմեն Սարգսյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բարբառագիտություն, բանահյուսություն, ազգագրություն: Հեղինակ է 36 գրքի, համահեղինակ՝ 4 գրքի, շուրջ 60 հոդվածի: ORCID: 0009-0002-5556-8165. armen.sargsyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտություն. Ուրուագիծ եւ դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, Լազարեան ճեմարանի հրատ., 318 էջ [Acharyan H. 1911, Armenian Dialectology: Outline and Classification of Armenian Dialects (with a dialectological map). – “Eminian Ethnographic Collection”, V. 8, Moscow–Nor Nakhichevan, Lazarian Seminary Press, 318 p. (in Armenian)]:

Բադիկյան Խ. 1986, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 354 էջ [Badikyan Kh. 1986, Phraseological Units of Modern Armenian. Yerevan, Press AS, SSR of Armenia, 354 p. (in Armenian)]:

Բեդիրյան Պ. 1973, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 232 էջ [Bediryan P. 1973, Modern Armenian Idiomatics. Yerevan, “Luys” Press, 232 p. (in Armenian)]:

Բեդիրյան Պ. 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1408 էջ [Bediryan P. 2011, Extensive Explanatory Dictionary of Armenian Idioms. Yerevan, YSU Press, 1408 p. (in Armenian)]:

Ղարիբյան Ա. 1947, Հայ բարբառագիտություն, Երևան, Հայաստանի մանկավարժական ինստիտուտի հրատ., 296 էջ [Gharibyan A. 1947, Armenian Dialectology. Yerevan, Press of the Pedagogical Institute of Armenia, 296 p. (in Armenian)]:

Մարգարյան Ա. 1966, Հայերենի հարադիր բայերը, Երևան, ԵՊՀ հրատ., 502 էջ [Margaryan A. 1966, Continuous Verbs of Armenian. Yerevan, YSU Press, 502 p. (in Armenian)]:

Մարգարյան Ա. 1975, Գորիսի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 568 էջ [Margaryan A. 1975, The Dialect of Goris. Yerevan, YSU Press, 568 p. (in Armenian)]:

Մինասյան Շ. 2007, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007, «Դիզակ պլյուս» հրատ., 128 էջ [Minasyan Sh. 2007, The Idioms of the Karabakh Dialect. Stepanakert, “Dizak Plus” Press, 128 p. (in Armenian)]:

Պողոսյան Ա. 1965, Հադրութի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 372 էջ [Poghosyan A. 1965, The Dialect of Hadrut. Yerevan, Press of the AS, SSR of Armenia, 372 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ [Jahukyan G. 1972, Introduction to Armenian Dialectology. Yerevan, Press of the Academy of Sciences of ASSR, 348 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 848 էջ [Sargsyan A. 2013, Dictionary of the Karabakh Dialect. Yerevan, “Edit Print” Press, 848 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2017, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 568 էջ [Sargsyan A., Minasyan Sh. 2017, Phraseological Dictionary of the Karabakh Dialect. Yerevan, “Edit Print” Press, 568 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2025, Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները. – Հայ բանասիրության հեռանկարներ. ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, Լոս Անջելես – Երևան, ԱՄՆ Արևմտյան թեմի հրատ., էջ 57–71 [Sargsyan A., Minasyan Sh. 2025, The Karabakh Dialect: Current State and Prospects for Preservation, Perspectives of Armenian Philology: Modern Issues of Study and Teaching, Los Angeles – Yerevan, Publishing House of Western Diocese of the Armenian Church of America, p. 57–71 (in Armenian)]:

Ֆալակյան Մ. 1985, Ռուսերենից և ռուսերենի միջոցով հայերենում կատարված բառային փոխառությունները (Ըստ ռուս-հայերեն ընդհանուր բառարանների նյութերի). – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 168–184 [Falakyan M. 1985, Word Borrowings from Russian and Through Russian into Armenian (According to Materials from General Russian-Armenian Dictionaries). – “Bulletin of Yerevan University”, № 2, p. 168–184 (in Armenian)]:

Антонова Л. 2025, Большой фразеологический словарь русского языка. Москва, изд. «Славянский дом книги», 928 с. [Antonova L. 2025, Large Phraseological Dictionary of the Russian Language. Moscow, “Slavyanskiy dom knigi” Press, 928 p. (in Russian)].

Молотков А. 1977, Основы фразеологии русского языка. Ленинград, изд. «Наука», 284 с. [Molotkov A. 1977, Fundamentals of Phraseology of the Russian Language. Leningrad, “Nauka” Press, 284 p. (in Russian)].

Назарян А. 1976, Фразеология современного французского языка. Москва, изд. «Высшая школа», 318 с. [Nazaryan A. 1976, Phraseology of the Modern French Language. Moscow, “Vysshaya shkola” Press, 318 p. (in Russian)].

Ожегов С. 2018, Толковый словарь русского языка. Москва, изд. «Мир и образование», 1375 с. [Ozhegov S. 2018, Explanatory Dictionary of the Russian Language. Moscow, “Mir i obrazovanie” Press (in Russian)].

Тихонов А. 2004, Фразеологический словарь современного русского литературного языка, т. 1-2. Москва, изд. «Наука», 1664 с. [Tikhonov A. 2004, Phraseological Dictionary of Modern Russian Literary Language, V. 1-2. Moscow, “Nauka” Press, 1664 p. (in Russian)].

ФРАЗЕОЛОГИЗМЫ С РУССКИМ ЗАИМСТВОВАННЫМ КОМПОНЕНТОМ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

ШОГЕР МИНАСЯН, АРМЕН САРГСЯН

Резюме

Ключевые слова: карабахский диалект, русский язык, словарный запас, заимствование, фразеологизм, семантическое изменение, корень, аффикс.

Займствованные слова в Карабахском диалекте, по сравнению с их значениями в русском языке, могут либо сохранять своё первоначальное значение, либо подвергаться различным семантическим изменениям. Одним из проявлений семантических изменений является употребление этих слов в составе фразеологизмов. Фразеологические единицы в основном состоят из заимствованных подчинённых и армянских главных компонентов. Фразеологизмы с коммуникативным значением – то есть выполняющие функцию предложения – сравнительно редки; они в основном имеют простую структуру, встречаются также односоставные предложения-фразеологизмы. Фразеологические единицы с номинативным значением включают все подтипы: именные, прилагательные, глагольные, наречные и модальные. Именные и прилагательные

nominal and adjectival phraseological units are mostly two-component, while adverbial and modal ones are quite rare. Verbal phraseological units are characterized by diverse relationships between their components and quantitatively predominate over other types. A significant number of them make word combinations that have acquired phraseological meaning. In verbal two-component units, the subordinate borrowed component is the noun, which can be used in various cases, with or without a postposition, in singular or plural form, and with or without an article. Many phraseological units containing borrowed components have similar or related expressions in Russian.

Shogher Minasyan – PhD. in Philology, Associate Professor, Senior Researcher at the Department of Modern Armenian Language of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: phonetics, lexicology, phraseology, morphology, syntax, Armenian dialectology. Author of 3 books, co-author of 6 books, about 30 articles. ORCID: 0009-0003-5923-4020. shogherminasyan@gmail.com

Armen Sargsyan – PhD. in Philology, Associate Professor, Researcher at the Department of Folklore of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA; Senior Researcher at the Department of Dialectology of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: Armenian dialectology, folklore, ethnography. Author of 36 books, co-author of 4 books, about 60 articles. ORCID: 0009-0002-5556-8165. armen.sargsyan@iae.am